ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 հունվարի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

7
(3038)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ՊԵՏՔ Է ԱՆԵՔ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ

2024 թվականի հաշվետու տարվա համար մինչեւ 2025 թվականի մայիսի 1-ը նախորդ տարի աշխատանքային պայմանագիր ունեցած բոլոր անձինք պետք է լրացնեն եկամուտների տարեկան հայտարարագիր, որը ոչ միայն դժվար է, այլեւ ծախսատար է քաղաքացու, եւ շահութաբեր՝ պետության համար:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե ինչ վճարումներ պետք է անի քաղաքացին, որպեսզի լրացնի իր սեփական հայտարարագիրը:

Այսպիսով՝ գործընթացը սկսվում է ID նույնականացման քարտի ձեռքբերումով: Նույնականացման քարտի համար վճարվող գումարը պետական վճարման միջոցով գնում է պետական բյուջե:

20-21 օրում նույնականացման քարտը ստանալու համար անհրաժեշտ է վճարել 3000 դրամ:

Սակայն եթե նույնականացման քարտն ավելի շուտ ստանալու նպատակ ունեք, ապա վճարումները կատարվում են հետեւյալ չափով՝

* 3,000+20,000 ՀՀ դրամ՝ նույնականացման քարտը 1 աշխատանքային օրվա ընթացքում ստանալու համար,
* 3,000+10,000 ՀՀ դրամ՝ նույնականացման քարտը 3-րդ աշխատանքային օրը ստանալու համար,
* 3,000+5,000 ՀՀ դրամ՝ նույնականացման քարտը 5-րդ աշխատանքային օրը ստանալու համար:

Հարկ է նշել, որ նույնականացման քարտ տպող մեկ սարք կա Հայաստանում, որը, ինչպես նախկինում է փորձը ցույց տվել, տարվա մի մասն աշխատում է, մյուս ժամանակ խափանված է:

Ստացվում է, որ վաղուց ներդրված համակարգը, որն արդեն պետք է կայունություն ունենար, սովորական քաղաքացու գլխին դարձել է պատուհաս:

Այսպիսով՝ վճարեցինք մատչելի 3000 դրամը նույնականացման քարտի համար:

Հաջորդիվ պետք է ձեռք բերել էլեկտրոնային ստորագրություն:

Էլեկտրոնային ստորագրության համար անհրաժեշտ է լինելու մոտենալ հեռախոսային օպերատորներից մեկի գրասենյակ: Եթե ձեր SIM քարտը նոր չէ, ապա պետք է վճարեք 500 դրամ՝ էլեկտրոնային ստորագրությունը հեռախոսահամարին կցելու համար: Վճարեցինք 500 դրամ:

Հաջորդիվ անհրաժեշտ է վճարել 3000 դրամ Ekeng-ին՝ էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակին, որպեսզի ակտիվանա ձեր էլեկտրոնային ստորագրությունը: Վճարվեց եւս 3000 դրամ:

Այսինքն, մեկ անձը հայտարարագիր լրացնելուն միայն նախապատրաստվելու համար պետք է վճարի 6500 դրամ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Մարտուն Գրիգորյանը մտադիր է մասնակցել Գյումրիում մարտին կայանալիք արտահերթ ընտրություններին: Ընդդիմադիր պատգամավորի այս որոշումը, իհարկե, տհաճ անակնկալ է եղել նաեւ իշխանությունների համար, քանի որ Մարտուն Գրիգորյանը բավականին ճանաչված է Գյումրիում եւ ունի մեծ ընտրազանգված: Վերջինս 2008 թվականին եւս մասնակցել էր Գյումրու քաղաքապետի ընտրություններին: Մարտուն Գրիգորյանի հետ կապ հաստատել չհաջողվեց, իսկ նրա օգնական Լիզա Գասպարյանն ասաց. «Այս պահին ձեռնպահ կմնամ մեկնաբանություն տալուց: Կարծում եմ, որ առաջիկայում՝ կարճ ժամանակահատվածում, պարոն Գրիգորյանն իր վերջնական որոշումը կհայտնի»: Ինչեւէ, արձանագրենք, որ Գյումրիում մարտի 30-ին սպասվող ընտրությունները թեժ են լինելու:

Սիրո Ամիրխանյանի նշանակումը գլխավոր հարկադիր կատարողի պաշտոնում դժգոհություն է առաջացրել համակարգի ներսում: «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի տեղակալները ճամպրուկային տրամադրություն ունեն: Ավելին՝ տեղակալներից Գագիկ Հարությունյանը արդեն ազատման դիմում է գրել եւ հեռացել է համակարգից: Սիրո Ամիրխանյանին համակարգում ճանապարհ անցած ու հոգեհարազատ անձ չեն համարում. ուստի դատելով իրավիճակից՝ շատերը կլքեն կառույցը: Ծառայության մամուլի խոսնակ Վարդուհի Պետրոսյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում, անդրադառնալով տեղեկություններին, նշեց, որ Գագիկ Հարությունյանը ազատվել է պաշտոնից, իսկ մյուս տեղակալները շարունակում են իրենց աշխատանքը:



Նիկոլ Փաշինյանի իշխանությունը շարունակում է քայքայել ազգայինի հիմքերը Հայաստանի Հանրապետության ներսում: Երեկ խորհրդարանական մեծամասնությունը ՔՊ 65 պատգամավորներով ընդունեց օրենք, համաձայն որի՝ Հայաստանի մշակութային ազգային կառույցները պետք է լինեն պետական: Այսինքն՝ իշխանությունը եւս մեկ անգամ ապացուցեց սեփական ապազգայնությունը: Միայն ընդդիմության ներկա 31 պատգամավորները Հայաստանի Օպերայի եւ բալետի թատրոնի, Պատկերասրահի, Գրադարանի եւ այլ մշակութային կառույցների անվանումներից «ազգային» բառի հանման օրենքին դեմ քվեարկեցին: Եթե «Արցախ» բառը, ըստ Ալեն Սիմոնյանի, պատերազմի վտանգ կարող է դառնալ, ապա այդպես էլ հոդաբաշխ չբացատրվեց, թե ազգային օպերան, ազգային թատրոնները կամ առհասարակ «ազգային» բառը ինչ սպառնալիք է իշխանության համար: Ըստ նախագծի՝ հայրենական մշակույթի զարգացման գործում մեծ ավանդ ունեցած կառույցների անվանումներում այսուհետեւ կլինի «պետական» բառը: Հունվարի 20-ին կայացած ԱԺ նիստի ժամանակ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Դանիել Դանիելյանը վստահեցրել էր, որ մշակութային բոլոր կառույցները պահպանելու են իրենց ազգային կարգավիճակը: Այսինքն՝ մշակութային կառույցի կարգավիճակը կլինի ազգային, իսկ անվանումը՝ պետական:

ԶՐՈՒՅՑ

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՎՃԱՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՊԱՇՆՈՐՀՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ

Վերջին օրերին Երեւանում ամենաշատ քննարկվող երկու թեմաներից մեկը քաղաքային տրանսպորտի սպասվող թանկացումներն են: Հայտնի է, որ փետրվարի մեկից քաղաքացիները կտեղաշարժվեն թանկացված սակագներով՝ միայն անկանխիկ եղանակով, QR կոդեր գնելով:

Այս հարցի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողը զրուցել է Դավիթ Խաժակյանի հետ:

-Պարոն Խաժակյան, տեղյակ ենք, որ հանրության շրջանում դժգոհության մեծ ալիք է առաջացել տրանսպորտի սակագնի փոփոխության շուրջ: Նախ՝ այդ համակարգն է բարդ, եւ դժվարանում է տոմս ձեռք բերելու ընթացակարգը, եւ հետո՝ թանկանում է ուղեվարձը: Այս ամենով պայմանավորված՝ հասարակության շրջանում դժգոհության մեծ ալիք է բարձրացել: Ի՞նչ կասեք այս հարցի վերաբերյալ, ինչպե՞ս եք գնահատում այս փոփոխությունը, տեղի՞ն է, թե՞ ոչ:

-Կարծում եմ, որ այս նոր սակագների շուրջ առկա փոփոխությամբ քաղաքացիներին, ըստ էության, ստիպում են հավելյալ գումար վճարել քաղաքապետարանի ապաշնորհության դիմաց: Չեմ կարծում, որ 3 անգամով տրանսպորտի սակագնի թանկացումը կարող է արդարացված լինել եւ կարծում եմ, որ փետրվարի մեկից մարդիկ այդուհանդերձ շարունակելու են վճարել 100 դրամ, ինչը ցույց կտա, որ քաղաքապետարանի նախաձեռնած փոփոխությունները ձախողվել են եւ ձախողված քաղաքական թիմը պետք է հեռանա:

-Կարծում եք՝ հանրությունը կմիանա՞ ընդդիմադիրների բոյկոտի կոչերին:

-Ըստ իս՝այո, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարորդները եւս լինելու են հանրության կողմից:

Ի տարբերություն 2015 թվականի, երբ վարորդները ստիպված էին գումար հավաքել իրենց պլանը կատարելու համար, այս անգամ վարորդները գումար հավաքելու խնդիր եւ պարտավորություն չունեն, եւ որքան գումար կվճարի քաղաքացին, վարորդն այդքան էլ կընդունի:

-Պարոն Խաժակյան, թեեւ քաղաքային իշխանությունը որեւէ պաշտոնական հայտարարություն չի տարածել, այնուամենայնիվ կա տեղեկություն այն մասին, որ այն քաղաքացիները, որոնք այդ համակարգը ձեռք չբերեն, կամ չվճարեն, ապա իշխանությունը, հնարավոր է, նաեւ տուգանքի միջոցների դիմի: Ի՞նչ եք կարծում, իրատեսակա՞ն է արդյոք դա: Կգնա՞ արդյոք քաղաքային իշխանությունը նման քայլի:

-Մենք նման կարգավորումներ չունենք, եւ քաղաքացիները նման դեպքերում տուգանվել չեն կարող: Դա անհարկի եւ ավելորդ վախ է, որը փորձում են տարածել քաղաքացիների շրջանում: Նման իրավասու անձ, որը կստուգի վճարված է քաղաքացու ուղեվարձը, թե ոչ, չկա:

-Օրեր առաջ ընդդիմությունն էլ էր արտահերթ նիստ նախաձեռնել՝ կասեցնելու այս նախաձեռնությունը, սակայն երկու խմբակցությունները՝ ՔՊ-ն եւ «Հանրապետությունը», տապալեցին այդ նիստը: Այս մասին ի՞նչ կասեք:

-ՔՊ-ն եւ «Հանրապետությունը» իրենց վարքագծով ցույց են տալիս, որ ոչնչով չեն տարբերվում նախորդ իշխանություններից: Փոխանակ գային եւ քննարկման առարկա դարձնեին թեման՝ նույնիսկ մերժվելու հնարավոր ելքով, խուսափում են գալուց եւ քննարկելուց: Սա այն մարդիկ են, որոնք ազդարարել են եվրոպական մոդելի պետության ստեղծումն ու կոալիցիա են կնքել միմյանց հետ, եւ վարվում են այնպես, ինչպես կվարվեն ցանկացած ոչ ժողովրդավար երկրներում միմյանց հետ: Սա հակաժողովրդավարական գործողություն է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԻՆՉ ՆՈՐ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ Է ԱՐԵԼ ՔՊ–Ն

Ինչն է եղել ԲԴԽ անդամի միակ թեկնածու Ալեքսանդր Սիրունյանի՝ ԲԴԽ չգնալու պատճառը:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ՔՊ-ականներին այնքան չի մտահոգել նրա թշնամանք տարածող գրառումները արցախցիների կամ զոհված զինծառայողի մոր մասին, որքան նոր բացահայտումը: Մասնավորապես ՔՊ-ականները բացահայտել են, որ Սիրունյանն իրականացրել է հետախուզման մեջ գտնվող հայտնի նախկին գործարարներից մեկի պաշտպանությունը, որին այդպես էլ ՀՀ իրավապահ համակարգը չի կարողանում գտնել, Հայաստան վերադարձնել ու պատասխանատվության կանչել:

Այդ հանգամանքը «դրվել է Սիրունյանի դիմաց», ինչից դրդված էլ նա հրաժարվել է իր թեկնածությունից:

Նշենք, որ երեկ ՔՊ-ում ԲԴԽ անդամի միակ թեկնածու Ալեքսանդր Սիրունյանը հայտնեց, որ քննարկումների արդյունքում կամովին որոշել է իր թեկնածությունը հանել:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «ՔՊ-ում ԲԴԽ անդամի թեկնածու Ալեքսանդր Սիրունյանի առնչությամբ դեռ երկմտում են:

Թեեւ մինչ վերջերս իշխող թիմը վստահ էր նրան ընտրելու հարցում, բայց բանն այն է, որ անգամ ՔՊ-ականներն իրենց առաջադրած թեկնածուի խայտառակ ու տգետ բառապաշարով գրառումները չեն կարողանում արդարացնել:

ԲԴԽ անդամի ընտրությունը կայանալու է այսօր՝ 15:00-ին, բայց ՔՊ-ից ArmLur.am-ին փոխանցեցին, որ դեռ վերջնական որոշում չունեն Սիրունյանի վերաբերյալ:

Այս պահին իշխող ֆրակցիան նիստ է անում եւ որոշելու են՝ ընտրելո՞ւ են Սիրունյանին, թե՞ ոչ:

ՔՊ-ական փաստաբան Ալեքսանդր Սիրունյանն այնքան է թշնամանք տարածող գրառումներ արել, որ նրան ընտրելը իսկապես խայտառակություն կլինի, ուստի ՔՊ-ականները տատանվում են՝ ընտրե՞լ նրան եւ կրկին իջեցնել առանց այն էլ ցածր վարկանիշը, թե՞ հետ կանգնել այդ որոշումից:

Նշենք, որ ընդդիմադիրները հայտարարել են՝ չեն մասնակցելու ԲԴԽ անդամի ընտրությանը»:

Ի վերջո, Ալեքսանդր Սիրունյանը հրաժարվեց ԲԴԽ անդամի թեկնածությունից:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌԴ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ԴՊՐՈՑ ԿԿԱՌՈՒՑՎԻ

3 ամիս հետաձգվելուց հետո վերջապես երեկ՝ հունվարի 21-ին, Մոսկվայում կայացել է Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանի եւ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի հանդիպումը:

Հանդիպման ընթացքում նախարարները քննարկել են ռուս-հայկական հարաբերությունների ողջ շրջանակը, ներառյալ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) եւ եվրասիական տարածքում ինտեգրացիոն այլ ասոցիացիաների շրջանակներում համագործակցությունը:

Հատուկ ուշադրություն է դարձվել Հարավային Կովկասում տիրող իրավիճակին՝ շեշտադրելով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների հավասարակշռված կարգավորումը: Ռուսաստանի ԱԳՆ-ն հայտնել է, որ հանդիպումը նպատակ ունի նպաստել Անդրկովկասում անվտանգության եւ կայունության ամրապնդմանը:

Միրզոյանը Լավրովին հրավիրել է Երեւան, իսկ նա հայտնել է, որ կօգտվի հրավերից:

ՌԴ ԱԳ նախարարը նաեւ տեղեկացրել է, որ մշակվում է Ռուսաստանի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի այցը Հայաստան: Մոսկվան հույս ունի, որ կկարողանա այդ այցին համապատասխանեցնել հայ-ռուսական միջտարածաշրջանային 10-րդ համաժողովը:

Երկու նախարարների հանդիպմանը քննարկվել է նաեւ հյուպատոսական ներկայության ընդլայնումը մասնավորապես Սյունիքի մարզում: Անդրադարձ է եղել Երեւանում Ռուսաստանի դեսպանությանը կից դպրոցի կառուցմանը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԵՐԹԱԿԱՆ ՎԱՐԿԸ ԿՎԵՐՑՆԻ

Ազգային ժողովում քննարկվել է «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) միջեւ «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագիծը: ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյանը տեղեկացրել է, որ համաձայնագիրը ստորագրվել է 2024 թվականի օգոստոսին, եւ ՎԶՄԲ-ն համաձայնել է տրամադրել 40 մլն դոլարի վարկ:

Ծրագրի նպատակներն են վերականգնվող էներգետիկայի զարգացում՝ ընդլայնելով դրա ծավալներն ու ինտեգրումը էլեկտրահաղորդման ցանցում, էներգետիկ ենթակառուցվածքների արդիականացում՝ ապահովելով դրանց հուսալիությունը եւ կայունությունը, էլեկտրահաղորդման ընկերության առեւտրային կենսունակության բարձրացում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ

Հայաստան կժամանեն Հյուսիսային Եվրոպայի եւ Բալթյան երկրների խորհրդարանների նախագահների ու փոխնախագահների գլխավորած պատվիրակությունները:

Այս մասին հայտնում են ՀՀ ԱԺ-ից, նշելով, որ հունվարի 23-ին նրանց մասնակցությամբ տեղի կունենա «Միասին հանուն խաղաղության եւ ժողովրդավարության» թեմայով պանելային քննարկումը: Նույն օրը պատվիրակությունների ղեկավարները հանդես կգան մամուլի համար հայտարարությամբ:

«ՀԱՅԱՍՏԱՆԸ» ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏԱԼԻՍ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը գրում է. «Բրիտանական կառավարությունը խորհուրդ է տալիս՝

1. Ջերծ մնալ Հայաստան-Ադրբեջան արեւելյան սահմանից 5 կմ հեռավորության վրա բոլոր ճանապարհորդություններից,

2. Չերթեւեկել Նոյեմբերյան-Իջեւան M16/H26 միջպետական ճանապարհով:

Ո՛չ բրիտանացի գիտնականները, ո՛չ էլ բրիտանացի հետախույզները չգիտեն, որ աշխարհի ամենաապահով տեղը Կիրանցի ժեշտի ցանկապատն է ու խորհուրդ են տալիս հատկապես այդ հատված չայցելել, այդ ճանապարհով չերթեւեկել...»:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը կանգնած է բարդ ու լուրջ մարտահրավերների առջեւ, որոնք վտանգում են նրա անվտանգությունը, ինքնիշխանությունն ու ժողովրդավարական արժեքները: Այս պայմաններում Եվրոպան պարտավոր է գործել՝ աջակցելով Հայաստանի ժողովրդին:

Այս մասին Բրյուսելում իր հարցազրույցում նշել է Եվրոպական խորհրդարանի ֆրանսիացի պատգամավոր Ֆրանսուա Գզավիյե Բելյամին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԹՐԱՄՓԸ ԿԴԱԴԱՐԵՑՆԻ՞ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ ԶԵՆՔ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼԸ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը չի բացառել Ուկրաինային ամերիկյան զենքի մատակարարումներն ամբողջությամբ դադարեցնելու հնարավորությունը: Հունվարի 21-ին Սպիտակ տանը լրագրողների հետ զրույցում նա նաեւ հույս է հայտնել, որ իր շփումը Ռուսաստանի առաջնորդ Վլադիմիր Պուտինի հետ «շատ շուտով» կկայանա:

Թրամփին հարցրել են՝ արդյոք ամերիկյան նոր վարչակազմը կշարունակի՞ զենք մատակարարել Կիեւին, թե՞ դիտարկում է մատակարարումներն ամբողջությամբ դադարեցնելու հնարավորությունը:

Ամերիկայի առաջնորդը նշել է, որ եվրոպական երկրները պետք է զգալիորեն մեծացնեն Կիեւին աջակցելու ծախսերը:

«Սա նրանց ավելի շատ է վերաբերում, քան մեզ, մեր միջեւ օվկիանոս կա», - հավելել է Թրամփը՝ մեջբերելով այն տվյալները, որոնց համաձայն՝ ԱՄՆ-ն իր նախորդ՝ Ջո Բայդենի վարչակազմի օրոք 200 միլիարդ դոլար ավելի է ծախսել Ուկրաինային օգնություն տրամադրելու վրա, քան ԵՄ-ն:

«Ի՞նչ է՝ մենք հիմա՞ր ենք: Կարծում եմ՝ դրա պատասխանն է՝ այո, որովհետեւ նրանք, հավանական է, այդպես են կարծում», - ասել է Թրամփը՝ կրկնելով իր այն պնդումը, որ ՆԱՏՕ-ի երկրները պետք է պաշտպանական ծախսերը հասցնեն իրենց ՀՆԱ-ի 5%-ին:

ԵԽ-Ն ԿՈՉ ԿԱՆԻ ՉՃԱՆԱՉԵԼ ԲԵԼԱՌՈՒՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Եվրախորհրդարանի անդամները Բելառուսի վերաբերյալ բանաձեւով մտադիր են կոչ անել ԵՄ երկրներին չճանաչել Բելառուսի նախագահական ընտրությունների արդյունքները, ինչպես նաեւ շարունակել ընդլայնել պատժամիջոցներն այդ երկրի դեմ: Այդ մասին ասված է Եվրախորհրդարանի կայքում հրապարակված փաստաթղթի նախագծում:

Արտաքին քաղաքականության հարցերի վերաբերյալ Եվրախորհրդարանի բանաձեւերը խորհրդատվական բնույթ ունեն եւ պարտադիր չեն Եվրամիության ինստիտուտների կամ ԵՄ անդամ երկրների համար: Հունվարի 22-ին սպասվում են հակաբելառուսական բանաձեւի քննարկումներն ու քվեարկությունը:

ԵՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ԿՔՆՆԱՐԿՎԻ ՈՒՐԲԱԹ ՕՐԸ

ՈՎՔԵՐ ԵՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

Ուրբաթ օրը՝ հունվարի 24-ին, ԱԺ Եվրահնտեգրացիայի հանձնաժողովում քննարկվելու է Հայաստանի՝ ԵՄ անդամակցության մասով արտախորհրդարանական ուժերի նախաձեռնությունը:



«Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» օրենքի նախագիծը ներառված է հանձնաժողովի արտահերթ նիստի օրակարգում:

Օրենքի ընդունման նպատակը առաջադեմ, քաղաքակիրթ, զարգացած մարդկության ընտանիքին անդամակցելու Հայաստանի ժողովրդի, նրա ներկայիս իշխանությունների կամքի, վճռականության ամրագրումն է: Օրենքը հռչակում է նախաձեռնողների եւ Հայաստանի Հանրապետության՝ Եվրամիությանն անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին, որ կկանխորոշի Հայաստանի իշխանությունների որոշումների եւ գործելակերպի ուղղվածությունն ու մասշտաբը: Աշխարհաքաղաքական ստեղծված իրավիճակում օրենքը, նրա ընդունման ձեւն ու միջոցը կմեծացնի Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության ամրակայումը, դիմադրունակությունը:

Օրենքի ընդունումը ժողովրդավարությունը, քաղաքացիների պետական կառավարմանը մասնակցության իրավունքն ու դրա գործնականում իրագործումը, իրավունքի գերակայությունը կդարձնի անշրջելի, կվերականգնի պետության քաղաքականության կանխատեսելիության նկատմամբ հավատն ու վստահությունը»,- նշված է հիմնավորման մեջ:

Նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչը ԱԺ-ում Արտակ Ջեյնալյանն է, հարակից զեկուցողը՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանը:

Քննարկմանը մասնակցելու են նաեւ նախաձեռնության հեղինակ արտախորհրդարանական ուժերի ղեկավարները՝ Տիգրան Խզմալյանը, Արամ Սարգսյանը:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «ԵՄ անդամակցության նախաձեռնությունը հաջորդ շաբաթ կքննարկվի Ազգային ժողովի մեկնարկելիք գարնանային նստաշրջանում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ արտախորհրդարանական ուժերը հրավիրվել են խորհրդարան՝ նախաձեռնությունը ներկայացնելու:

Խորհրդարանում կլինեն «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը, «Հանուն Հանրապետության» կուսակցության նախագահ Արման Բաբաջանյանը, «Հայաստամի Եվրոպական կուսակցության» ղեկավար Տիգրան Խզմալյանը. վերջինս գրեթե վստահ է՝ խորհրդարանը համաձայնություն է տալու իրենց նախաձեռնությանը:

Հիշեցնենք, որ դեռ նախորդ տարի ամռանը Փաշինյանը հայտարարել էր, թե հանրաքվե չի լինելու, քանի որ ինքը գիտի հանրության տեսակետը:

Բայց դե էլ ինչ Փաշինյան, որ որեւէ հարցի վերաբերյալ հաստատուն կարծիք ունենա. հիմա էլ ուրիշ բան է ասում:

Վերջերս Կառավարության՝ հունվարի 9-ի նիստի ժամանակ նա հայտարարեց, որ ՀՀ-ն ԵՄ անդամ կարող է դառնալ միայն հանրաքվեի միջոցով:

Թե ինչով է պայմանավորված կարծիքի այս կտրուկ փոփոխությունը, դժվար է ասել: Տիգրան Խզմալյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում կարծիք հայտնեց, որ ՀՀ իշխանությունները 3-4 ամսում հասկացան՝ ԵՄ-ին այլընտրանք չկա»:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎՆԱՍԸ 7–8 ՄԼՆ ԴՐԱՄ Է

Երեկ հայտնի դարձավ, որ թալանել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի աներձագ, ՔՊ-ական պատգամավոր Հրաչյա Հակոբյանի առանձնատունը:

Լրագրողների հետ զրույցում Հակոբյանը նշեց, որ վնասը 7-8 մլն դրամ է: Տարել են գումար, ոսկյա շղթաներ եւ ժամացույց:

ՈՎ Է ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀԸ

Երեկ հայտնի դարձավ, որ Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիայի նախագահ է ընտրվել Արայիկ Հարությունյանը:

Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր. «Ծանրամարտի ֆեդերացիայի նախագահի հետաձգված ընտրությունը կկայանա այսօր՝ ժամը 12:00-ին, իսկ միակ հավակնորդը Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանն է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ մարզերից մարզիչները հավաքվելու եւ ընտրելու են Ֆեդերացիայի նախագահին: Նրանք զգուշացվել են, որ ամեն դպրոցի տնօրեն, մարզիչ իր հետ 10-15 հոգի մարդ պիտի բերի, որպեսզի Ծանրամարտի Ֆեդերացիայի նախագահ ընտրվի վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ըստ սպորտի ոլորտում շրջանառվող լուրերի՝ այս հայտարարության արմատները խորն են, իշխանությունները Հրաչյա Ռոստոմյանին թույլ չեն տվել առաջադրվել այդ պաշտոնում, քանի որ նպատակ ունեն Ծանրամարտի ֆեդերացիայի նախագահի պաշտոնում կարգել վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանին:

Հիշեցնենք, որ օրերս ՀԱՕԿ գլխավոր քարտուղար Հրաչյա Ռոստոմյանը հայտարարել էր, որ 8 տարի նախագահելուց հետո այլեւս չի առաջադրվի Ծանրամարտի ֆեդերացիայի նախագահի պաշտոնում: Ինքը՝ Ռոստոմյանը, «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշել էր, որ հրաժարվում է առաջադրվել՝ նոր դեմքերին ճանապարհ տալու համար:

Հավելենք, որ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Արայիկ Հարությունյանը հանձնարարել է Ֆեդերացիայի հետ կապված ներքին փաստաթղթեր հավաքել, որպեսզի հասկանա, թե մինչեւ այս ժամանակահատվածը Հրաչյա Ռոստոմյանն ինչպես է ղեկավարել Ֆեդերացիան, թե ինչ կոռուպցիոն ռիսկեր կարող են լինել:

Հավելենք նաեւ, որ պատահական չէ, որ Արայիկ Հարությունյանը, վարչապետի որոշմամբ, արդեն 2 օր է՝ հունվարի 21-22-ը, գտնվում է արձակուրդում»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԼՂ-ՈՒՄ ՎԵՐՋԻՆ 4 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՏԱՄՆՅԱԿ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՆ ԿՈՐԵԼ

«Վերջին 4 տարիների ռազմական գործողությունների հետեւանքով մենք ունենք տասնյակ, եթե չասեմ հարյուրավոր տրանսպորտային միջոցներ, որոնք մնացել են ռազմական գործողությունների վայրում եւ անհետացել են, նաեւ ունենք տրանսպորտային միջոցներ, որոնք սեպտեմբերի 13-14-ի հարձակման ժամանակ եմ մնացել Ադրբեջանի կողմից օկուպացված տարածքներում, եւ այդ մարդկանց տրանսպորտային միջոցների վրա առ այսօր գույքահարկ է գոյանում՝ չնայած այն հանգամանքին, որ այդ մարդիկ չեն տիրապետում, տնօրինում եւ օգտագործում այդ տրանսպորտային միջոցը»,- խորհրդարանում հայտարարեց ՔՊ-ական պատգամավոր Արմեն Խաչատրյանը:

Նա ասաց, թե պետք է նորմ նախատեսվի, որպեսզի այդ մարդկանց հարցն էլ լուծվի եւ առաջարկեց առաջինից երկրորդ ընթերցման ժամանակ այդ հարցն էլ կարգավորվի:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՍԻՐԻԱՅՈՒՄ

ՖՐԱՆՍԻԱՆ ԱՍԱԴԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՕՐԴԵՐ Է ԱՐՁԱԿԵԼ

Ֆրանսիայում հետաքննող դատավորները կրկին ձերբակալության օրդեր են արձակել Սիրիայի նախկին նախագահ Բաշար ալ Ասադի նկատմամբ՝ 2017 թվականին Արաբական Հանրապետությունում քաղաքացիական օբյեկտների ռմբակոծմանը ենթադրյալ մեղսակցության համար, հայտնում է Agence France-Presse-ը:

Օրդերը տրվել է Ֆրանսիայի Ազգային հակաահաբեկչական դատախազության պահանջով, որը հետաքննում էր ֆրանսասիրիական ծագում ունեցող 59-ամյա Սալահ Աբու Նաբուի մահը:

Դատախազության խոսքով՝ տղամարդը զոհվել է 2017 թվականին սիրիական բանակի ուղղաթիռների հասցրած հարվածներից՝ Դարաա նահանգում գտնվող իր տան գնդակոծման հետեւանքով: Դատախազությունը նոր օրդեր տրամադրելու պահանջը պատճառաբանել է նրանով, որ Ասադն այլեւս նախագահ չէ եւ հետեւաբար չի օգտվում դատական գործընթացների ընթացքում առկա պետական անձեռնմխելիությունից:

Սա Սիրիայի նախկին առաջնորդի նկատմամբ ձերբակալության երկրորդ օրդերն է, որը տրվում է Ֆրանսիայում: Նախորդը տրվել էր Սիրիայի զորքերի կողմից քիմիական զենքի ենթադրյալ օգտագործման հարցում Ասադի նկատմամբ առկա մեղադրանքների առնչությամբ: Ինչպես հայտնում է AFP լրատվական գործակալությունը, ֆրանսիական արդարադատությունը սիրիացի բարձրաստիճան պաշտոնյաների ձերբակալության ընդհանուր 14 օրդեր է տվել:

Իսկ ի՞նչ է կատարվում երկրում եւ դրա շուրջ

Դեկտեմբերի 8-ին՝ ավելի քան 13 տարվա պատերազմից եւ անկայուն վիճակից հետո, Դամասկոսն ընկավ: Ընդդիմադիր թուրքամետ ուժերը գրավեցին իշխանությունը, իսկ երկրի նախագահ Բաշար ալ Ասադը, արտաքին գործերի եւ պաշտպանության նախարարներն ու նրանց ընտանիքները հեռացան երկրից՝ ապաստանելով Ռուսաստանի Դաշնությունում:

Ավելի վաղ ընկել էին Սիրիայի մի շարք շրջաններ, այդ թվում՝ երկրի երկրորդ քաղաք Հալեպը, իսկ դեկտեմբերի 7-ին թուրքական կանոնավոր ստորաբաժանումները մտան ահաբեկիչների կողմից գրավված սիրիական քաղաք: Պրոթուրքական ուժերը երկրի հյուսիսում Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից աջակցություն ստացող քրդերից գրավել էին Մանջիբն ու կոտորած իրականացրել քրդաբնակ շրջաններում, որի ընթացքում զոհվել էր վեց անմեղ երեխա:

Այս ամենի արդյունքում, դեկտեմբերի 12-ին հայտնի դարձավ, որ Թուրքիայի եւ Քաթարի պատվիրակությունները Դամասկոսում հանդիպելու են թուրքական աջակցություն վայելող ահաբեկչական «Հայաթ Թահրիր ալ Շամ» խմբավորման ղեկավար Աբու Մոհամմադ ալ Ջոլանիի հետ: Նրա նկատմամբ միանգամից փոխվեց միջազգային վերաբերմունքը՝ հատկապես արեւմտյան պետությունների կողմից:

ԱՄՆ-ի կողմից ահաբեկչական խմբավորում համարվող «Հայաթ Թահրիր ալ-Շամ»-ի ղեկավար Ջոլանին երկար ժամանակ փորձել է փոխել իր հանրային իմիջը: Նա հրապարակայնորեն հրաժարվել է «Ալ-Քաիդա»-ի հետ իր կապերից եւ փորձել է իրեն ներկայացնել որպես պրագմատիկ եւ հանդուրժող առաջնորդ:

Այս պահին նրա հետ հաշվի են նստում, հանդիպումներ ունենում արեւմտյան մի շարք պետությունների ղեկավարներ՝ մոռանալով, որ դեռ մեկուկես ամիս առաջ նրա գլխի համար 10 միլիոն դոլար պարգեւատրում էին խոստանում:

Իշխանության գալով՝ Ջոլանին եւ իր թիմը առաջին հերթին վերացրին երկրի որոշ դատարաններում առկա փաստաթղթեր՝ ամենայն հավանականությամբ վերացնելու իրենց դեմ առկա փաստերը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՏՂԱՄԱՐԴԸ «ՋԵՐՄՈՒԿԻ» ՇՇՈՎ ՔԱՑԱԽԱՋՈՒՐ ԷՐ ԽՄԵԼ

«Ջերմուկ» հանքային ջրի շշով քացախաթթու խմած վլադիկավկազցի գործարար Օլեգ Գուսովի մահվան դեպքի առթիվ հարուցված քրեական գործը կասեցվել է: Այս մասին Pua новости-ի հետ զրույցում հայտնել է ընտանիքի փաստաբան Այրաթ Խիկմատուլինը:

Դեպքից հետո ընկերությունը պարզաբանել է, որ արտադրությունն ավտոմատացված է, եւ միայն մեկ շշի մեջ շեղում լինել չի կարող:

Գուսովի ընտանիքը հայց է ներկայացրել հանքային ջրեր արտադրող ընկերության դեմ, որոնց թվում են հայկական «Ջերմուկ Գրուպը» եւ անհատ ձեռնարկատեր Իգոր Ալեքսանդրովիչ Իսուպովը, սակայն Վլադիկավկազի շրջանային դատարանը հայցը թողել է առանց վարույթի:

Ավելի վաղ «Ջերմուկ Գրուպ»-ը անդրադարձել է ՌԴ-ում «Ջերմուկ Գրուպ»-ի վերաբերյալ հնչած մեղադրանքին. «Ռուսական լրատվամիջոցներով «Ջերմուկ Գրուպ» ՓԲ ընկերության դեմ ներկայացված հայցի վերաբերյալ հրապարակումների կապակցությամբ հայտնում ենք, որ հրապարակումներում տեղ են գտել իրականությանը չհամապատասխանող, զրպարտություն հանդիսացող եւ անմեղության կանխավարկածը խախտող տեղեկություններ, քանի որ ո՛չ հարուցված քրեական վարույթի շրջանակներում, ո՛չ էլ իրականացված բազմաթիվ ստուգումներից (այդ թվում՝ ՌԴ պետական իրավասու մարմինների կողմից իրականացված) որեւէ մեկով չի հիմնավորվել, որ ՌԴ Վլադիկավկազ քաղաքի բնակիչ Օլեգ Գուսովի մահը վրա է հասել «Ջերմուկ» հանքային ջուր խմելու կամ գործարանային արտադրության շշալցված «Ջերմուկ» հանքային ջրի շշի պարունակությունը խմելու արդյունքում:

Մահացած անձի ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայցը ամբողջությամբ անհիմն է, քանի որ բացառվում է կապը «Ջերմուկ» հանքային ջրի եւ ՌԴ Վլադիկավկազ քաղաքի բնակչի հետ տեղի ունեցած ցավալի դեպքի միջեւ, հետեւաբար եւ բացառվում է «Ջերմուկ Գրուպ» ՓԲ ընկերության մեղքը:

Ավելին՝ Օլեգ Գուսովի մահվան առնչությամբ ՌԴ իրավապահների կողմից հարուցված քրեական վարույթում «Ջերմուկ Գրուպ» ՓԲ ընկերությունը նույնիսկ չի հանդիսանում վարույթին ներգրավված անձ:

Օլեգ Գուսովի մահվան դեպքից հետո ՀՀ իրավասու մարմինների կողմից իրականացվել եւ ռուսական կողմին են ներկայացրել համապատասխան ապացույցներ՝ հիմնված ստուգումների վրա: Բազմաթիվ ստուգումներ են իրականացվել նաեւ ՌԴ իրավասու մարմինների կողմից, որոնց արդյունքները եւս ապացուցել են, որ «Ջերմուկ» հանքային ջուրը համապատասխանում է միջազգային ստանդարտներով սահմանված պահանջներին եւ նախատեսված է սննդի մեջ օգտագործելու համար:

Վերը նշված ապացույցների բավարար լինելու մասին է վկայում նաեւ այն հանգամանքը, որ ՌԴ ամբողջ տարածքում վերացվել են «Ջերմուկ» հանքային ջրի վաճառքի նկատմամբ կիրառված արգելքները:

Հուսով ենք՝ քրեական գործի օբյեկտիվ քննության արդյունքում եւս մեկ անգամ կփաստվի «Ջերմուկ Գրուպ» ՓԲ ընկերության անմեղությունը»:

ԴԱՏԱՐԱՆԸ ԳՈՐԾԸ ԱՌԱՆՁԻՆ Է ՔՆՆԵԼՈՒ

Հակակառուպցիոն դատարանը որոշում է կայացրել երրորդ բանակային կորպուսի նախկին հրամանատար, գեներալ-մայոր Գրիգորի Խաչատուրովի գործով: Դատարանը գործը մասերի է բաժանել ու քննելու է առանձին:

Ինչպես հայտնի է, 2023 թվականին ՀՀ գլխավոր դատախազությունը 3-րդ բանակային կորպուսի նախկին հրամանատար, գեներալ-մայոր Գրիգորի Խաչատուրովի նկատմամբ հանրային քրեական հետապնդում էր հարուցել՝ պաշտոնեական դիրքի օգտագործմամբ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով անշարժ գույքն օրինականացնելու (փողերի լվացման) համար:

Այս գործով 13 մեղադրյալ կա: Մեղադրյալ է նաեւ պաշտպանության նախկին նախարար, «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը:

Արդյունքում՝ հակակոռուպցիոն դատարանը 1,5 տարի քննեց գործը ու նոր հասկացավ, որ այն պետք է առանձնացնի եւ առանձին քննի:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

«ՏԵԼԵԳՐԱՄ» ՀԱՎԵԼՎԱԾՈՎ ԹՄՐԱՆՅՈՒԹ ԵՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ

ՆԳՆ-ից հայտնում են. «Համայնքային ոստիկանության Մարտունու բաժնի ծառայողները, ստացված օպերատիվ տվյալներն իրացնելով, Երանոս բնակավայրի անտառամերձ հատվածում հայտնաբերել եւ, մեքենայով հանդերձ, ապօրինի թմրանյութ պահելու եւ օգտագործելու կասկածանքով բաժին են ներկայացրել Ծովասար գյուղի բնակիչներ 17, 21 եւ 22 տարեկան երեք երիտասարդի:

21-ամյա վարորդը հայտնել է, որ «Տելեգրամ» հավելվածով թմրանյութ է գնել, որն ընկերների հետ վերցրել է նշված վայրից, սակայն ճանապարհին նկատելով ոստիկաններին՝ նետել է: Երիտասարդը թմրանյութը նետած տեղում գտել եւ իրավապահներին է ներկայացրել կանեփանման զանգվածը:

Հերթական օպերատիվ տվյալն իրացնելով՝ Մարտունու համայնքային ոստիկանները Ներքին Գետաշեն բնակավայրում հայտնաբերել եւ, մեքենայով հանդերձ, ապօրինի թմրանյութ ձեռք բերելու, պահելու եւ օգտագործելու կասկածանքով բաժին են ներկայացրել 17 եւ 23 տարեկան երկու համագյուղացու: 23-ամյա վարորդը հայտնել է, թե գրպանում մարիխուանայով կաթուցիչ ունի: Նա ձերբակալվել է: Անձնական խուզարկությամբ նրա գրպանում հայտնաբերվել է մարիխուանայով կաթուցիչը:

Հետագա միջոցառումներով ոստիկանները պարզել են թմրանյութի ձեռքբերման աղբյուրը: Հրազդան քաղաքի բնակիչ 28-ամյա երիտասարդը հայտնաբերվել ու ձերբակալվել է: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են Մարտունու քննչական բաժին: Հանգամանքները պարզվում են»:

ՔԿ ԵԿԱԾ ՏԵՍԱԿՑՈՂԸ ԹՄՐԱՄԻՋՈՑ Է ԲԵՐԵԼ ԻՐ ՀԵՏ

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի ծառայողները հունվարի 21-ին՝ ժամը 12:05-ի սահմաններում, անձնական խուզարկության են ենթարկել կալանավորված անձի մոտ կարճատեւ տեսակցության եկած քաղաքացի Ռ.Ն.-ին:

Խուզարկության արդյունքում ծառայողները Ռ.Ն.-ի ներքնազգեստից հայտնաբերել են 2 փաթեթ, որոնցից մեկին թելով ամրացված է եղել ապակե կաթոցիչ: Ըստ քաղաքացու բանավոր հայտարարության՝ փաթեթներում մարիխուանա տեսակի թմրամիջոց է:

Քաղաքացի Ռ.Ն.-ն ձերբակալվել է Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության «Նուբարաշեն» տարածքային բաժնի ծառայողների կողմից եւ հայտնաբերված փաթեթների հետ միասին ներկայացվել ՀՀ ՔԿ Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 21-ից 22-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 125 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՌՈՒՄՆԵՐԸ ՈՍԿԵՊԱՐԻՑ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ԵՆ ԶՈՐԱՆՈՑԻ ԳՈՒՅՔԸ

Արդեն 6-7 օր է, ինչ Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար գյուղի վարչական տարածքում՝ միջպետական ավտոճանապարհի եզրին, «ֆուռեր» են կանգնած: Դրանք քանդված ռուսական զորանոցի մոդուլները տեղափոխում են: Ոսկեպարի բնակիչները չգիտեն, թե այդ մոդուլները ուր են տեղափոխվում. ոմանք կարծում են, թե դրանք տեղափոխում են Արարատ, ոմանք էլ կարծում են, որ դրանք Ռուսաստան են տեղափոխում: Ռուսական զինուժը Ոսկեպարում հայտնվեց 2021թվականի օգոստոսի սկզբին: Ռուս զինվորականները սկզբից գյուղի ծայրին գտնվող լքված տներից մեկում էին բնակվում, հետո հավաքովի մոդուլներից զորանոց կառուցեցին: Նման զորանոց հավաքեցին նաեւ Բերդ համայնքի Այգեպար գյուղում նախկին փոքր օդանավակայանի տարածքում: Ենթադրվում էր, որ ռուս զինվորականները պետք է մասնակցեին սահմանի այդ հատվածում Ադրբեջանի հետ սահմանազատման աշխատանքներին, սակայն չմասնակցեցին:

ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄՆԵՐՆ ԱՐԴՅՈՒՆՔ ՏՎԵՑԻՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցապնդումներ ենք արել, թե նա, որպես մարզպետ, մարզի համայնքներում՝ Դիլիջանում, Նոյեմբերյանում եւ Բերդում ինչո՞ւ քաղաքացիների ընդունելություն չի կատարում: Հունվարի 14-ին մարզպետին նոր հարց ենք ուղղել. «2024 թվականին, որպես մարզպետ, Տավուշի մարզպետարանում քանի՞ անգամ, ե՞րբ եք քաղաքացիների ընդունելություն կատարել, յուրաքանչյուր ընդունման դեպքում քանի՞ անձի եք ընդունել: 2025 թվականին նախատեսո՞ւմ եք մարզպետարանում քաղաքացիների ընդունելություն կատարել, եթե այո, ապա ի՞նչ ժամանակացույցով եք ընդունելություն կատարելու»:

Այդ հարցապնդումները, դրանց վերաբերյալ մեր թղթակցի հրապարակումները, քննադատությունը արդյունք տվեցին: Հունվարի 15-ին մարզպետ Ղալումյանը որոշել է ընդունել «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2019 թ. հուլիսի 24-ի թիվ 103-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշումը: Ըստ այդ որոշման հավելվածի՝ մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելությունը կազմակերպվում է յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը՝ մարզպետի նշանակած ժամին: Նոյեմբերյանի համայնքապետարանում՝ հունվար, մայիս, սեպտեմբեր ամիսներին, Բերդի համայնքապետարանում՝ փետրվար, հունիս, հոկտեմբեր ամիսներին, Դիլիջանի համայնքապետարանում՝ մարտ, հուլիս, նոյեմբեր ամիսներին, մարզպետի աշխատավայրում՝ ապրիլ, օգոստոս, դեկտեմբեր ամիսներին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

750 ԴՐԱՄԻ ՓՈԽԱՐԵՆ՝ 2050 ԴՐԱՄ

ՄԱՐԶԻՑ ԵՐԵՎԱՆ ՀԱՄՆԵԼԸ ՄԵԾ ԽՆԴԻՐ Է ԴԱՌՆՈՒՄ

Երեւան այլեւս մարզային տրանսպորտներ չեն մտնի: Քաղաքացիներին հերթական անհարմարություն պատճառած որոշումն արդեն հասցրել է մեծ բնակման առիթ դառնալ:

Օրեր առաջ Երեւանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանն իր ֆեյսբուքյան էջում տեղադրել է հատված՝ մեջբերված WYG կազմակերպության զեկույցից. «Քաղաքի կենտրոնում գործող ավտոբուսների տեսակները վերահսկելու եւ մեքենաների քանակը կրճատելու նպատակով Երեւան մտնող ցանկացած երթուղի պետք է ավարտվի առկա ավտոկայանում կամ տրանսպորտի հանգույցում, որտեղ ուղեւորները կարող են տեղփոխ կատարել՝ շարունակելով ուղեւորությունը քաղաքային տրանսպորտով»:

Առաջին հայացքից քաղաքաբնակների տեսանկյունից դրական այս որոշումը մեծ խնդիր է ստեղծում մարզաբնակների համար: Նրանք ստիպված են լինում ավելի գումար եւ ժամանակ ծախսել քաղաք հասնելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթին դիմած մարզաբնակ քաղաքացիներից մեկը, ով ապրում է Հրազդանում, ասում է՝ իրենց մոտակա ավտոկայանը Աբովյան քաղաքում է, որտեղից կրկին պետք է նոր ավտոբուս նստի Երեւան հասնելու համար: Սակայն մեկ այլ խնդիր է այն, որ քաղաքացիները ստիպված են հավելյալ տաքսի ծառայությունից օգտվել Աբովյանին մոտ՝ Հյուսիսային ավտոկայան հասնելու համար, ինչը եւս 1000 դրամ է, եթե ոչ ավելի:

Ստացվում է՝ 750 դրամ՝ Հրազդանից մինչեւ Աբովյան, Աբովյանից 1000 դրամ՝ մինչեւ Հյուսիսային ավտոկայան, եւ փետրվարի 1-ից արդեն 300 դրամ՝ քաղաքի որեւէ կետ հասնելու համար: Այսինքն, միայն 2050 դրամ, օրինակ, Հրազդանից քաղաք հասնելու համար:

Մեկ այլ խնդիր է, որ ավտոկայանում ստիպված են սպասել եւս մեկ ավտոբուսի, մինչդեռ ուղիղ երթի ժամանակ քաղաքացիները իրենց ժամանակից խնայում են նվազագույնը 10 րոպե:

Եվ այսպես, Հայաստանի տարբեր մարզերից եկողների համար այս նախագիծը մեծ դժվարություններ է առաջացնելու:

Նշենք նաեւ, որ այս նախագծին զուգահեռ Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանն իր ֆեյսբուքյան էջում գրել է, որ Երեւանում տրանսպորտի թանկացման փաթեթներում փոփոխություններ են եղել:

«Սիրելի՛ երեւանցիներ,

վերջին շրջանում միասնական տոմսային փաթեթների նոր սակագների վերաբերյալ ձեր արձագանքներն ու առաջարկությունները ուշադիր ուսումնասիրել ենք: Մեր առաջնահերթությունն է ապահովել մեր քաղաքի բոլոր բնակիչների հարմարավետությունը եւ լսել յուրաքանչյուրի կարծիքը:

Այս հարցի շուրջ փոփոխություններ կատարելու նպատակով առաջիկա ավագանու նիստի ընթացքում կքննարկվեն սակագների կիրառման տրամաբանության վերանայման հնարավորությունները: Մեր նպատակը համապարփակ եւ արդարացի լուծում տալն է՝ հաշվի առնելով թե՛ մարդկանց պահանջները, թե՛ քաղաքային բյուջեի կայունությունը:

Այսպիսով, փետրվարի 11-ի Երեւանի ավագանու հերթական նիստի ժամանակ առաջարկելու ենք հետեւյալ փոփոխությունները՝

- 10 ուղեւորություն - 2000 ՀՀ դրամ՝ օգտագործման ժամկետը 45 օր, ներկայիս 2200 ՀՀ դրամի եւ 30 օրվա փոխարեն:
- 300 ՀՀ դրամ՝ օգտագործման ժամկետը 180 րոպե, ներկայիս 90 րոպեի փոխարեն:
- 1 օր - 900 ՀՀ դրամ՝ անսահմանափակ ուղեւորություններ, ներկայիս 8 ուղեւորափոխադրման սահմանափակման փոխարեն:
- 7 օր - 5000 ՀՀ դրամ՝ անսահմանափակ ուղեւորափոխադրումներ, ներկայիս 30 ուղեւորափոխադրման սահմանափակման փոխարեն:

Հիշեցնենք նաեւ, որ հունվարի 1-ից գործում են նաեւ հետեւյալ փաթեթները՝

- 30 օր - 9000 ՀՀ դրամ՝ անսահմանափակ ուղեւորափոխադրումներ,
- 90 օր - 24000 ՀՀ դրամ՝ անսահմանափակ ուղեւորափոխադրումներ,
- 365 օր - 90000 ՀՀ դրամ՝ անսահմանափակ ուղեւորափոխադրումներ:

Առաջիկայում Երեւանի ավագանու նույն նիստի ընթացքում կհայտարարվի նաեւ այլ փոփոխությունների եւ լրացումների մասին, որոնք համակարգը երեւանցիների համար ավելի հարմարավետ եւ արդյունավետ կդարձնեն», - գրել է քաղաքապետը:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԴԻՏՎՈՒՄ Է ՓՈՇՈՒ ՆՎԱԶՄԱՆ ՏԵՆԴԵՆՑ

Երեւան քաղաքում դիտվում է ըստ բաղադրության չտարբերակված փոշու կոնցենտրացիայի նվազման տենդենց: Այս մասին հայտնում է «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

Հունվարի 15-20-ն ընկած ժամանակահատվածում Կենտրոն վարչական շրջանում նախորդող շաբաթվա (հունվարի 8-15) համեմատությամբ փոշու միջին շաբաթական կոնցենտրացիան նվազել է 1.3 անգամ:

Հոկտեմբեր ամսվա վերջին օրերից սկսած՝ Կենտրոն վարչական շրջանում (Լուսավորիչ-Ագաթանգեղոս խաչմերուկ) փոշու կոնցենտրացիան մշտապես գերազանցել է ՍԹԿ-ն, սակայն հունվարի 19-ին եւ 20-ին փոշու կոնցենտրացիայի գերազանցում չի դիտվել:

Փոշու կոնցենտրացիայի ՍԹԿ-ից գերազանցում դիտվել է միայն Նոր Նորք վարչական շրջանում հունվարի 19-ին՝ 1.2 եւ 20-ին՝ 1.1 անգամ:

Շենգավիթ եւ Արաբկիր վարչական շրջաններում փոշու կենցենտրացիայի գերազանցումներ չեն դիտվել:

ՈՐ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ԿՀԱՄԱՐՎԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Ազգային ժողովում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը ներկայացրեց «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքի նախագիծը: Օրենքում հստակեցվում է, թե որ տարիքային խմբին է ուղղված երիտասարդական քաղաքականությունը:

«Մինչ այս թեեւ օրենք չկար, բայց տարբեր ենթաօրենսդրական ակտերում երիտասարդության տարիքը սահմանվում էր 16-30 տարեկան, իսկ որոշ ծրագրերում, օրինակ՝ մատչելի բնակարան երիտասարդ ընտանիքների համար ծրագրում, այն ընդլայնվել էր մինչեւ 35 տարեկանը: Նոր օրենքով սահմանվել է, որ Հայաստանում երիտասարդ է համարվում 13-35 տարեկան անձը»,- նշեց Արթուր Մարտիրոսյանը: Նա նաեւ պարզաբանեց, թե ինչու է տարիքային շեմը իջեցվել եւ բարձրացվել:

«13 տարեկանից երիտասարդների հետ աշխատանքը, մասնագիտական կողմնորոշումը եւ նրանց հոգեբանական առանձնահատկություններին համապատասխան ծրագրերի իրականացումը առավել արդյունավետ է: Սա լավագույն եվրոպական փորձն է: Մյուս կողմից՝ 30-35 տարեկանի ընդգրկումը պայմանավորված է մեր ժողովրդագրական խնդիրներով: Հայաստանում երիտասարդները կյանքի կարեւոր որոշումներ հաճախ կայացնում են ավելի ուշ փուլերում»,-ասաց փոխնախարարը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 2 մարդ զոհվել է, 17-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉ Է ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրենքների նախագծերի փաթեթը մշակվել է սոցիալական արդարության համատեքստում՝ փոխադրամիջոցների սեփականատերերի շահերի պաշտպանության նկատառումներից ելնելով. այս մասին ասել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Մկրտչյանը:

Հունվարի 22-ի Ազգային ժողովի հերթական նիստում քննարկվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը:

Մասնավորապես առաջարկվում է Հարկային օրենսգրքում սահմանել, որ փոխադրամիջոցի գույքահարկից ազատվում են նաեւ հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների սեփականատերերը, հանցագործության հիմքով քրեական վարույթ նախաձեռնելու պահից մինչեւ փոխադրամիջոցը դրա սեփականատիրոջ տիրապետմանը հանձնելը: «Նշված հիմքով փոխադրամիջոցի պետական գրանցումը կասեցվում է, եւ գույքահարկի հաշվարկը դադարում է ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով: Ընդ որում, նշված ժամկետը կարող է երկարացվել, եթե ստացվում են տվյալներ, որ փոխադրամիջոցը քրեական կամ քրեադատավարական վարույթի հիմքով շարունակվում է գտնվել սեփականատիրոջ տիրապետումից դուրս»,- մանրամասնել է հիմնական զեկուցողը:

Արմեն Մկրտչյանը պատասխանել է պատգամավորների հարցերին՝ ներկայացնելով պարզաբանումներ առաջարկվող կարգավորումների, քրեական վարույթը նախաձեռնելու պահից նախատեսվող ժամկետների վերաբերյալ:

Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Նարեկ Ղահրամանյանը ներկայացրել է գլխադասային հանձնաժողովի դրական եզրակացությունն օրենսդրական փաթեթի վերաբերյալ:

Մտքերի փոխանակման ձեւաչափում պատգամավորները կարեւորել են օրենսդրական նախաձեռնությամբ առաջարկվող փոփոխությունները, խնդրի վերաբերյալ հնչել են նաեւ առաջարկություններ:

Եզրափակիչ ելույթում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի տեղակալը նշել է, որ պատրաստ են քննարկել ներկայացված առաջարկները եւ գտնել լավագույն լուծումներ:

ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՑԱՆԿ

ՈՐ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԵՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ

ՊԵԿ նախագահի հրամանով նվազեցվող եկամուտների մասով սահմանվել է շեմ՝ 300 հազար դրամ, եւ մինչեւ այդ շեմը ստացված եկամուտները կարող են չհայտարարագրվել հայտարարատուի կողմից:



1. Արդյոք հայտարարագրում լրացվող եկամուտները ենթակա՞ են հարկման

Հայտարարագրում լրացվող ոչ բոլոր եկամուտներն են ենթակա հարկման: Օրինակ, եթե Դուք հայտարարատու եք եւ 2025 թվականին պետք է ներկայացնեք եկամուտների հայտարարագիր եւ բացի Ձեր աշխատավարձից ունեք նաեւ լրացուցիչ եկամուտներ, օրինակ՝ ընտանիքի անդամի կամ այլ անձի կողմից Ձեր բանկային հաշվեհամարին, քարտին որպես նվիրատվություն կատարված փոխանցումներ կամ արտերկրից որպես նվիրատվություն ստացված գումարներ՝ լրացնելով Ձեր հայտարարագրում որեւէ հարկային պարտավորություն Դուք չեք ունենա:

2. Արդյոք հայտարարագրման ենթակա է Ձեր անշարժ եւ շարժական գույքը

Ոչ, անշարժ եւ շարժական գույքը հայտարարագրման ենթակա չէ եկամուտների տարեկան հայտարարագրում Դուք պետք է ներառեք միայն 2024 հաշվետու տարվա ընթացքում ստացած եկամուտները:

3. Արդյոք հայտարարագրման ենթակա են Ձեր ծախսերը

Ոչ, ծախսերը ենթակա չեն հայտարարագրման, Դուք պետք է հայտարարագրեք միայն 2024 հաշվետու տարվա ընթացքում ստացած եկամուտները:

4. Արդյոք պետք է հայտարարագրեք Ձեր բանկային հաշվեհամարին կամ քարտին փոխանցված գումարները

Եկամտային հարկի տարեկան հայտարարագրում լրացվում են հաշվետու տարվա ընթացքում ֆիզիկական անձի ստացված եկամուտները: Հետեւաբար, եթե բանկային հաշվեհամարին կամ քարտին փոխանցված գումարները համարվում են ստացված եկամուտներ, ապա դրանք լրացվում են հայտարարագրի համապատասխան բաժիններում:

Պետք է հիշել, որ նվիրատվությամբ, անհատույց, փոխառությամբ, գույքի օտարումից միանվագ ստացված չհարկվող եկամուտները կարող են հայտարարագրում չլրացվել, եթե պակաս են 300 հազար դրամից: Այսինքն, եթե 2024 թվականի ընթացքում Ձեր բանկային հաշվեհամարին կամ քարտին որպես նվիրատվություն կատարվել են փոխանցումներ, ապա այդ գումարների վերաբերյալ տեղեկատվությունը եւս պետք է ներառեք հայտարարագրում, սակայն այդ եկամուտները հարկման ենթակա ՉԵՆ:

5. Սեփական հաշիվների միջեւ փոխանցումները, արդյոք պետք է ներառել հայտարարագրում

Ոչ, սեփական հաշիվների, քարտերի կամ հաշվից քարտ եւ հակառակը փոխանցումները ՉԵՆ համարվում եկամուտներ եւ ՉԵՆ ներառվում եկամուտների հայտարարագրում:

6. Եթե Դուք վճարային տերմինալից Ձեր հաշվեհամարին կամ քարտին փոխանցել եք գումար, արդյոք պետք է այդ տվյալները լրացնել հայտարարագրում

Ոչ, Ձեր հաշվեհամարին կամ քարտին վճարային տերմինալից անձամբ կատարել եք փոխանցում, ապա դա չի համարվում եկամուտ եւ չպետք է ներառեք հայտարարագրում:

7. Եթե հայտարարագիր ներկայացնողը միաժամանակ հանդիսանում է ԱՁ արդյոք հայտարարագրում պետք է ներառել նաեւ ԱՁ-ի եկամուտները

Ոչ, ԱՁ-ի եկամուտները համարվում են ձեռնարկատիրական եկամուտներ եւ հայտարարագրում չեն լրացվում:

8. Եթե 2024 թվականի ընթացքում արտերկրից Ձեզ փոխանցվել է գումար, արդյոք այդ գումարները պետք է ներառել հայտարարագրում

Եկամտային հարկի տարեկան հայտարարագրում լրացվում են հաշվետու տարվա ընթացքում ֆիզիկական անձի ստացված/ստացվող եկամուտները: Հետեւաբար, եթե արտերկրից Ձեզ փոխանցված գումարները համարվում են ստացված եկամուտներ, ապա դրանք լրացվում են հայտարարագրի համապատասխան բաժիններում: Պետք է հիշել, որ նվիրատվությամբ, անհատույց, փոխառությամբ, գույքի օտարումից միանվագ ստացված չհարկվող եկամուտները կարող են հայտարարագրում չլրացվել, եթե պակաս են 300 հազար դրամից: Այսինքն, եթե 2024 թվականի ընթացքում արտերկրից Ձեզ որպես նվիրատվություն կատարվել են փոխանցումներ, ապա այդ գումարների վերաբերյալ տեղեկատվությունը եւս պետք է ներառեք հայտարարագրում, սակայն այդ եկամուտները հարկման ենթակա ՉԵՆ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ԱՌԱՋԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐԸ

Հայաստանում լույս է տեսել առաջին հայերեն լեզվով ֆինանսական ամսագիրը, որը կոչվում է «Ֆինանսիստ»: «Ֆինանսիստը» Freedom Holding Corp.-ի հրատարակությունն է (Freedom Broker Armenia-ն այս միջազգային հոլդինգի մաս է), հարմարեցված տեղական լսարանի համար, տրամադրում է արդի տեղեկատվություն ներդրումների, ֆինանսական շուկաների, գործիքների եւ ակտիվների մասին: Ամսագիրը կարեւոր քայլ է մեդիա աշխարհում եւ օգնելու է բարելավել երկրում ֆինանսական գրագիտության մակարդակը:

Հուսալի տեղեկատվության հասանելիությունը չափազանց կարեւոր է ներդրումների աշխարհում: «Ֆինանսիստը» պատասխանն է Հայաստանում ֆինանսական կրթության աճող պահանջարկին: Հատուկ շեշտադրում ունենալով ներդրումային ռազմավարությունների եւ ֆոնդային շուկայի վերլուծության վրա՝ ամսագիրը ծառայում է որպես կարեւոր ռեսուրս ինչպես նոր, այնպես էլ փորձառու ներդրողների համար:

«Ֆինանսիստ» ամսագրի գործարկումը նշանակալի քայլ է Հայաստանում ֆինանսական գրագիտության բարելավման ուղղությամբ: Մենք հավատում ենք, որ մեր քաղաքացիներին տրամադրելով մատչելի ֆինանսական գիտելիքներ, մենք կարող ենք նրանց հզորացնել տեղեկացված որոշումներ կայացնելու տեսանկյունից: Որոշումներ, որոնք դրականորեն կազդեն նրանց ֆինանսական ապագայի վրա: Այս ամսագիրը ոչ միայն ֆինանսների, այլեւ տեղեկացված ներդրումների մշակույթ ստեղծելու մասին է»,- նշում է Freedom Broker Armenia-ի տնօրեն Հովակ Հովակիմյանը:

Ամսագիրը միջազգային ասպարեզում հաստատվել է որպես ներդրումների վերաբերյալ հեղինակավոր հրատարակություն: Այն առաջարկում է արդիական բովանդակության համաշխարհային ներդրումային ռազմավարությունների եւ բիզնեսների համար եզակի ֆինանսական լուծումների վերաբերյալ: Ամսագիրն այժմ հասանելի է նաեւ հայերեն՝ ավելի հարմարեցված տեղի լսարանին: Ընդլայնումը դեպի հայկական շուկա նոր հնարավորություններ է բացում երկրում գործող ընկերությունների համար՝ հնարավորություն տալով նրանց օգտվել ֆինանսական եւ ներդրումների միջազգային փորձից:

Արդեն լույս է տեսել «Ֆինանսիստ»-ի առաջին համարը: Այն անվճար հասանելի կլինի երկրի տարբեր բաշխման կետերում՝ ներառյալ ֆինանսական հաստատությունները, կրթական կենտրոնները եւ համայնքային միջոցառումները: Բացի այդ, ամսագրի էլեկտրոնային տարբերակը հասանելի կլինի Freedom Broker Armenia կայքում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿՅՈՒՏԱՐԻ ՍՈԽԱԿԸ

ՀՈՆ ՀՐԴԵՀ ԿԱ, ՈՉ ՄԱՏՅԱՆ...

«Երիտասարդ ըլլալ եւ երգե՞լ, Ծեր լինել եւ աղոթե՞լ: Այս է կյանքը: Ա՞հ, գեղեցիկ կյանք մ'ալ կա. Մերն է այդ. «Երգե՞լ, աղոթե՞լ ու սիրե՞լ»:

Արեւմտահայ բանաստեղծ Պետրոս Դուրյանի խոսքերն են, ով չնայած շատ կարճ կյանք ունեցավ, բայց մնաց հայոց գրականության էջերում՝ որպես անվանի գրող:

Եթե անծանոթ են գրողի ստեղծագործությունները, ապա նշենք, որ «Սկյուտարի սոխակ» եւ «մեր քնարերգության Վահագնը» շրջասույթները արդեն իսկ բնութագրում են Պետրոս Դուրյանի բանաստեղծությունները, ինչը ստեղծում է հնարավորություն՝ փոքրիշատե կարծիք ձեւավորելու նրա մասին:

Դուրյանի ստեղծագործությունները ճանաչելը հեշտ, բայց միեւնույն ժամանակ բարդ է: Դուրյանական երկերը սերն են առ հայրենիք ու կին՝ չնայած նրան, որ հեղինակի բանաստեղծություններում արտացոլվում են նաեւ բողոքն առ Աստված եւ տակավին երիտասարդ տարիքում «հողե վերմակի տակ ննջելու» ցավը:

Պետրոս Դուրյանը հայտնի էր որպես դրամատուրգ եւ այդպես էլ կարող էր շարունակել դրամատուրգի ճանապարհը, եթե վրա չհասներ մահը:

Պետրոս Դուրյանը մահացել է 21 տարեկան հասակում, եւ միայն գրողի մահից հետո են հայտնաբերվել վերջինիս տասնյակների հասնող եւ նմանը չունեցող բանաստեղծությունները, որոնցից շատերը դարձան հայտնի եւ սիրելի ոչ միայն հայ, այլ նաեւ համաշխարհային պոեզիայի շարքերում:

Չնայած նրան, որ Դուրյանը մահճում ասել է՝ «Ալ ժամանակ չունիմ...», այնուամենայնիվ թողել է գրական արժեքավոր ժառանգություն:

Հայ մեծերից Պարույր Սեւակը մի առիթով ասել է. «Եթե մի չար հրաշքով գոլորշիանան աշխարհի բոլոր լճակները՝ Դուրյանի «Լճակով» կարելի է վերստեղծել դրանք»:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է հայ մեծերի ներբողները՝ նվիրված Պետրոս Դուրյանին:

«Նա է մեր նոր քնարերգության առաջին մեծը եւ միշտ էլ կմնա վերջինի կողքին, որովհետեւ նա չի հնանում, ինչպես չեն հնանում ժպիտն ու հառաչը, ծիծաղն ու հեծկլտոցը». Պարույր Սեւակ:

«Դուրյանի աշխարհում լճակ կա, եւ ինչ լճակ: Եթե մի չար հրաշքով գոլորշիանան աշխարհի բոլոր լճակները՝ Դուրյանի «Լճակով» կարելի է վերստեղծել դրանք: Նա մեզ, իր օրինակով, մտերմացրեց այդ «մելամաղձոտ» լճակին, ինչպես նաեւ սովորեցրեց «գրավվիլ, լռել ու խոկալ»». Պարույր Սեւակ:

«Դուրյանն ամենեն պարզը եւ իր պարզության մեջ զգացման ամենեն վեհ բարձրությանը հասնող, բուն ժողովրդային հանճարն է ըստ իս». Գրիգոր Զոհրապ:

«Ապրելու եւ սիրվելու իրավունքով ծնված բանաստեղծը միայն կյանքի «սեւ կաթը» ըմպեց, բայց երբեք չդավաճանեց իր քնարն ու վեհ կոչմանը: Իր մեծ նախորդ Սայաթ-Նովայի նման «զայրացավ», բայց երբեք չանիծեց». Հովհաննես Թումանյան:

Չնայած, որ Դուրյանը մերժված սիրո երգիչ էր, չէր կարող ապրել առանց սիրո:

Սկյուտարի սոխակի գրչին են պատկանում «Նե», «Ջնե պաշտեմ», «Մանիշակ», «Ներա հետ», «Սիրել», «Դրժել», «Լճակ», «Ինչ կըսեն», «Տրտունջք» բանաստեղծությունները:

Պոլսի Սկյուտար թաղամասում ծնված 21-ամյա բանաստեղծը 1872-ին թաղվում է հենց Սկյուտարի գերեզմանոցում: Հետագայում նրա գանգոսկրերը հանձնվել են Երեւանի Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանին ի պահ: Դուրյանը մահացավ թոքախտից՝ երազելով իր տաղերի ժողովածուի լույսընծայման մասին:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՋՈԿՈՎԻՉԸ ՀԱՂԹԵՑ ԱԼԿԱՐԱՍԻՆ

Սերբ թենիսիստ Նովակ Ջոկովիչն Ավստրալիայի բաց առաջնության քառորդ եզրափակիչում հաղթեց իսպանացի Կարլոս Ալկարասին:

«Մեծ սաղավարտի» 4 մրցաշարերից առաջինի՝ Ավստրալիայի բաց առաջնության տղամարդկանց մենախաղի քառորդ եզրափակիչում մրցեցին Նովակ Ջոկովիչն ու Կարլոս Ալկարասը: 3 ժամ 38 րոպե ձգված մրցախաղում Ջոկովիչն առավելության հասավ 4 սեթերից հետո՝ 4:6, 6:4, 6:3, 6:4 հաշվով:

Ավստրալիայի բաց առաջնությունը մեկնարկել է հունվարի 12-ին եւ կեզրափակվի հունվարի 26-ին: Թենիսի «Մեծ սաղավարտ»-ի տարվա առաջին մրցաշարի՝ Ավստրալիայի բաց առաջնության տղամարդկանց մենախաղի գործող չեմպիոնը Իտալիան ներկայացնող Յանիկ Սիններն է, կանանց գործող չեմպիոնը՝ բելառուս Արինա Սաբալենկան: Կանանց մենախաղի եզրափակիչը նախատեսված է հունվարի 25-ին, իսկ տղամարդկանցը՝ հունվարի 26-ին: Ավստրալիայի բաց առաջնության տղամարդկանց ամենատիտղոսակիր թենիսիստը սերբ Նովակ Ջոկովիչն է, ով 10 անգամ տիրացել է մրցաշարի գավաթին: Կանանց մրցաշարում ամենատիտղոսակիրը Մարգարետ Կորտն է, որը գավաթին տիրացել է 11 անգամ:

ԵՐԲ ԼՈՒՅՍ ԿԸՆԾԱՅՎԻ ՀԵՆՐԻԽ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԳԻՐՔԸ

«Newmag» հրատարակչությունը 2025 թվականին լույս կընծայի Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ, Միլանի «Ինտեր»-ի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանի ինքնակենսագրական գիրքը:

Այս մասին հայտնում է «Newmag» հրատարակչության հիմնադիր տնօրեն Արտակ Ալեքսանյանը: «Երկրպագուների համար սպասված նորություն. այս տարի հրատարակվելու է հանրահայտ ֆուտբոլիստի ինքնակենսագրականը: Մխիթարյանը դեռեւս «Newmag»-ի ամառային փառատոնի ընթացքում էր ակնարկել այս ծրագրի մասին, իսկ այս պահին գրքի վրա աշխատանքն ընթանում է ամբողջ թափով: Գիրքը միաժամանակ կթարգմանվի եւ կհրատարակվի մի քանի լեզուներով»,- գրել է Ալեքսանյանը:

Մխիթարյանը ֆուտբոլիստի կարիերան սկսել է Երեւանի «Փյունիկ»-ում, հաջորդաբար հանդես է եկել ուկրաինական «Մետալուրգ», «Շախտյոր», գերմանական «Բորուսիա Դորտմունդ», անգլիական «Մանչեսթեր Յունայթեդ», «Արսենալ», իտալական «Ռոմա» ակումբներում: Հենրիխ Մխիթարյանն այժմ Միլանի «Ինտեր»-ի ֆուտբոլիստ է: Մխիթարյանը Հայաստանի ազգային հավաքականի լավագույն ռմբարկուն է, 12 անգամ դարձել է Հայաստանի լավագույն ֆուտբոլիստ: Հանրահայտ ֆուտբոլիստը ՅՈՒՆԻՍԵՖ-ի բարի կամքի դեսպանն է Հայաստանում:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համատեղ հայտարարում է 2025-2026 ուսումնական տարվա «Չինական մեծ պարիսպ» կրթաթոշակների տրամադրման մասին՝ ՉԺՀ համալսարաններում ուսանելու եւ գիտահետազոտական աշխատանք կատարելու համար:

Տարբեր ոլորտներում տրամադրվող կրթաթոշակները նախատեսված են ուսանողների եւ հետազոտողների համար, որոնք ցանկանում են մեկամյա բուհական կամ հետբուհական կրթություն ստանալ ՉԺՀ համալսարաններում: Դասընթացների հիմնական լեզուներն են անգլերենը կամ չինարենը:

Հնարավոր թեկնածուների փաստաթղթերի ամբողջական փաթեթները մինչեւ փետրվարի 6-ն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն: Ոչ ամբողջական եւ կրթաթոշակի չափանիշներին չհամապատասխանող հայտերը չեն դիտարկվելու:

Յուրաքանչյուր երկիր կարող է ներկայացնել առավելագույնը երկու թեկնածու. հայտերը կարող են ներկայացվել միայն ՀՀ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի երաշխավորությամբ: Թեկնածուներից մեկը պետք է լինի կին:

Լրացուցիչ հարցերի դեպքում կարող եք զանգահարել ԿԳՄՍՆ արտաքին կապերի բաժին, հեռ. (+374) 10 599646:

ՀՀ ԿԳՄՍՆ Հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

ՀԵՏԵՎԵԼ Է ՓՈԽԱԴՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը երեկ Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոցում հետեւել է դրսեկության ձեւով (էքստեռն) փոխադրման քննությունների ընթացքին:

Այս տարի դպրոցների մանկավարժական խորհուրդների կողմից դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրման երաշխավորված սովորողները 14-ն են: Այցի ընթացքում Արաքսիա Սվաջյանը շրջել է դասարաններում, հաջողություն մաղթել աշակերտներին:

Ներկա են եղել նաեւ ԿԳՄՍՆ Գնահատման եւ թեստավորման կենտրոնի փոխտնօրեն Կարո Նասիբյանը եւ ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության պետ Թամարա Սարգսյանը:

Նշենք, որ դպրոցի սովորողների համար էքստեռն փոխադրական քննություններ կազմակերպվում են՝ հիմք ընդունելով սովորողի՝ հանրակրթական ծրագրերի յուրացման մակարդակը: Էքստեռն փոխադրական քննություններ կազմակերպվում են 1-ից 8-րդ դասարանների բացառապես այն սովորողների համար, որոնք նախորդ դասարանի տարեկան, տվյալ դասարանի ընթացիկ եւ առաջին կիսամյակում ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից ունեցել են գերազանց առաջադիմություն: Նույն կարգավորումը վերաբերում է նաեւ 10-րդ դասարանի սովորողներին, եթե նրանք մասնակցություն են ունեցել միջազգային օլիմպիադաների, մրցաշարերի, առաջնությունների եւ փառատոների:

ՀՀ ԿԳՄՍՆ Հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

● Հունվարի 31-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Երեք ընկեր» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-6.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հաշմանդամ երեխային կամ 1-ին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակաշրջանը հաշվառվո՞ւմ է աշխատանքային ստաժում: Եվ կցանկանայի նաեւ տեղեկանալ՝ երեխային խնամելու ժամանակահատվածը ինչպես է հաշվառվում աշխատանքային ստաժում:

Երանուհի Հակոբյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ե. Հակոբյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անհրաժեշտ աշխատանքային ստաժի առկայության դեպքում հաշմանդամ երեխայի խնամակալության ժամանակաշրջանը մինչեւ երեխայի 18 տարին լրանալը կամ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակաշրջանը հաշվառվում է ծնողի, որդեգրողի, խնամակալի աշխատանքային ստաժում, եթե նա ունի խնամարկյալի հաշմանդամության ժամանակահատվածը հաստատող տեղեկանք, իսկ խնամակալի դեպքում՝ նաեւ խնամակալ ճանաչված լինելու եւ խնամակալության ժամանակահատվածի մասին տեղեկանքներ, սակայն տասը տարուց ոչ ավելի՝ մինչեւ կենսաթոշակ նշանակելն ընկած ժամանակահատվածում:

Սահմանված աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային ստաժում հաշվառվում են նաեւ ծնողներից մեկի՝ մինչեւ յուրաքանչյուր երեխայի երկու տարին լրանալը երեխային խնամելու ժամանակահատվածը՝ վեց տարուց ոչ ավելի: Մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի աշխատանքային ստաժ՝ բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակի չափը հաշվարկելիս (վերահաշվարկելիս) աշխատանքային ստաժի հանրագումարի մեջ (տարի, ամիս, օր) մինչեւ 6 ամսվա (180 օրվա) ժամանակահատվածը չի հաշվառվում, իսկ 6 ամսվանից ավելի ժամանակահատվածը հաշվառվում է որպես մեկ տարվա ստաժ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ է թույլատրվում փոփոխել աշխատանքի էական պայմանները:

Մարինե Մարգարյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատանքի վայրի, աշխատանքի վարձատրության չափի եւ (կամ) այն որոշելու ձեւի, արտոնությունների, աշխատաժամանակի (աշխատանքի եւ հանգստի) ռեժիմի, տարակարգերի եւ պաշտոնների անվանումների, աշխատանքային պայմանագրի տեսակի եւ (կամ) գործատուի փոփոխման դեպքում թույլատրվում է փոփոխել աշխատանքի էական պայմանները: Փոփոխելու դեպքում գործատուն պետք է գրավոր ծանուցի մինչեւ 1 տարի աշխատողին ոչ ուշ, քան 14 օր առաջ, 1-5 տարի աշխատողին՝ 35 օր առաջ, 5-10 տարի աշխատողին՝ 42 օր առաջ, 10-15 տարի աշխատողին՝ 60 օր առաջ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելիս մի կողմը գրավոր առաջարկում է մյուս կողմին լուծելու պայմանագիրը: Համաձայնության դեպքում մյուս կողմը 7 օրվա ընթացքում պետք է ծանուցի առաջարկ ներկայացրած կողմին, որից հետո կնքվում է գրավոր համաձայնագիր:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի պատմության թանգարանում երեկ կայացավ միջազգային բանախոսությունների շարքից եւս մեկ զեկույց՝ «Հայաստանը հնագույն քարտեզներում» խորագրով մշտական ցուցադրության շրջանակում:

Ցուցադրվեց կավե սալիկ, որի վրա պահպանված քարտեզում առկա է հնագույն Բաբելոնն իր հարակից տարածքներով: Դրանց թվում է նաեւ հայկական Ուրարտուն կամ Վանի թագավորությունը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-15 -20 -2 + 2
Կոտայքի լեռներ	-10 -15 -2 + 2
Կոտայքի նախալեռներ	-4 - 9 0 + 3
Գեղարքունիք	-8 - 11 -2 + 1
Լոռի	-4 - 8 +7 + 10
Տավուշ	0 -2 +3 + 6
Արագածոտնի լեռներ	-15 - 18 -2 + 2
Արագածոտնի նախալեռներ	-5 - 9 -2 + 2

Արարատ	0 - 5 +2 + 4
Արմավիր	-2 - 5 +2 + 4
Վայոց ձորի լեռներ	-6 - 9 +2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +2 + 5
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	0 + 3 + 7 + 10
ԼՂՀ	-2 - 6 + 8 + 10
Երեւան	-1 - 3 0 + 2

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.1.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*